

Տարակուսանք է առաջացնում միայն այն, թե ինչու պետք է Ոսկանը մի տարում, միևնույն քաղաքում երկու անգամ հրատարակեր միևնույն տոնացույցը: Սակայն այդ երկու հրատարակությունների համեմատությունը ենթադրություն է առաջացնում, որ նրանցից մեկը (մեր նկարագրությունների մեջ երկրորդը, նկ. 2) կարող է կատարված լինել Լիվոռնոյում, և Ամստերդամ անունը անվանաթերթում ճիշտ տեղեկություն չէ (կան ուրիշ դեպքեր, երբ Լիվոռնոյի կամ Մարսելի տպագրությունների վրա դնում էին Ամստերդամ անունը): Այս ենթադրության համար նշույթ է տալիս երկու տոնացույցների տառերի ու նրանց դրոշմվածքի որոշ տարբերությունը, ըստ որում առաջինի (մեր նկարագր. առաջինը, նկ. 1) տառերը և դրոշմվածքը նման են նույն թվականին Ամստերդամում տպագրված վերոհիշյալ երկու գրքերին, իսկ երկրորդին՝ նույն թվականին Լիվոռնոյում՝ դարձյալ Ոսկանի տպարանում տպագրված Բելլարմինտսի «Կարգապետութիւն քրիստոնէական»-ի տառերին: Առաջին տոնացույցի ճիշտակարանում կա տպագրության ավարտի ամսաթիվը՝ մարտի 25 (երկրորդի մեջ ամսաթիվ չկա): Հայտնի է, որ մինչև 1669-ի մայիսը Ոսկանը Ամստերդամում է եղել, ուրեմն առաջին տոնացույցի Ամստերդամում տպվելը անհասկած է նաև այս տեսակետից: Ոսկանը 1669-ի երկրորդ կեսին եղել է Լիվոռնոյում, ուր և կարող էր տպագրել երկրորդ տոնացույցը: Կարելի է անել նաև մի երկրորդ ենթադրություն: Դա այն է, որ Ամստերդամում Ոսկան Երևանցին ունեցել է ոչ թե մեկ, այլ երկու տպարան, որոնցից մեկը, ըստ երևույթին, գործել է նաև Ամստերդամից Ոսկանի հեռանալուց հետո:

3. ՍԱՂՄՈՍԱՐԱՆ: Մարսել, տպ. Ոսկան Երևանցու և Սողոմոն Լևոնյանի, 1673, 416 էջ, զարդեր, 371-ըզ էջում պատկեր: Հանրային գրադարան, № 1052:

Անվանաթերթ՝ Կիբե Սաղմոսաց Դավթի Տպագրեցեալ ներ գործարանում սրբոյ էջմիածնի, և սրբոյն Սարգսի գորավարի: Ի հայրապետութեան աեառն Յակօբայ, և ի բազաուրութեան Քրիստոսապսակի և բարեպաշտի արբայի Լուգովիկոսի. վերակացութեամբ և հոգարարութեամբ և ծախիւմ Ոսկանայ վարդապետի և եպիսկոպոսի Երևանեցոյ: Ի մարտիլիայ: Թուին Քրիստոսի. 1673. և Հոկտեմբերի. 23:

Հիշատակարանը «Մանուցումն աս ընթերցողս» վերնագրով՝ 404—411 էջերում:

Հանրային գրադարանում պահվող այս շատ հազվագյուտ Սաղմոսարանի տպագրությունը սկսվել է Մարսելի հայկական տպարանի հետապնդման ծանր օրերին մի նարեկի և ժամագրքի հետ միասին: Ֆրանսիացի բանասեր Հ. Տ. Բորին իր «Les origines de l'imprimerie à Marseille» գրքում (Մարսել, 1858) խոսելով Մարսելի հայկական տպարանի գործունեության շուրջը՝ ակնարկում է մի սաղմոսարանի մասին, որի տպագրությունը սկսվել է Ոսկանի կենդանության օրոք, բայց չի ավարտվել⁸: Զարբհանալյանը այդ առիթով գրում է. «Պորի գաղղիացվույն այս հիշատակոմ Սողոմոսը և մեր ունեցած տեղեկությունը կցուցանեն, թե այս անկատար մնացած տպագրություն՝ նարեկացվույն աղոթամատայանն է, որո քանի մի թերթերն միայն ունինք, տպագրյալ ի 1673»⁹: 1673 թվականը կրող Մարսելում տպագրված սաղմոսա-

⁸ «Բագմավեպ», 1891, հոնիս, էջ 165:

⁹ Գ. Զարբհանալյան, Պատմություն հայկական տպագրության, էջ 118: